ՌԱՀՀԿ ԱՄՍԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

2

Փետրվար 2010

Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոն

ՌԱՀՀԿ-ի նոր ամսական լրատու

ՌԱՀՀԿ-ն անցյալ ամիս մեկնարկ տվեց նոր ամսական լրատուների շարքի: Այժմ ձեր սեղանին է ՌԱՀՀԿ-ի լրատուի երկրորդ համարը, որը համառոտակի ներկայացնում է 2010թ. փետրվարին մեր իրականացրած գործունեությունը եւ ծրագրերը:

ՌԱՀՀԿ-ի գործունեությունը եւ ծրագրերը

«ՌԱՀՀԿ-ն՝ 15 տարեկան. նոր գաղափարների ուժը»



Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնը (ՌԱՀՀԿ) փետրվարի 19-ին կազմակերպեց հատուկ ընդունելություն, որի առիթը «ՌԱՀՀԿ-ն՝ 15 տարեկան. նոր գաղափարների ուժը» վերնագրով եռալեզու Տարեգրքի լույսընծայումն է: Գրքի շնորհանդեսին ներկա էին շուրջ 100 հրավիրյալներ՝ այդ թվում Ազգային ժողովի պատգամավորներ, Կառավարության պաշտոնյաներ, ինչպես նաեւ ՀՀ-ում հավատարմագրված միջազգային կառույցների ու դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներ՝ Հայաստանում Իտալիայի դեսպան Բրունո Սկապինին, Մեծ Բրիտանիայի դեսպան Չարլզ Լոնսդեյլը եւ ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի դեսպան Սերգեյ Կապինոսը:

Մոտավորապես 500 էջից բաղկացած «ՌԱՀՀԿ-ն՝ 15 տարեկան. նոր գաղափարների ուժը» Տարեգիրքը երկու տասնյակից ավելի հայերեն, անգլերեն եւ ռուսերեն վերլուծությունների ու հոդվածների ինքնատիպ ժողովածու է, որոնց հեղինակները հայ եւ օտարազգի առաջատար փորձագետներ են: Այն նաեւ նեառում է 1991-ից մինչ օրս Հարավային Կովկասի տարածագոտու երկրներում տեղի ունեցած նշանակալի իրադարձությունների կարճառոտ ժամանակագրությունը եւ ընթերցողի դատին է հանձնում հավելյալ նյութեր՝ համապատասխան քարտեզներ, փաստաթղթեր եւ այլն: «ՌԱՀՀԿ-ն՝ 15 տարեկան. նոր գաղափարների ուժը» ժողովածուն կարող եք ձեռք բերել՝ կապվելով Կենտրոնի հետ, իսկ դրա էլեկտրոնային տարբերակը ներբեռնել ՌԱՀՀԿ-ի www.acnis.am/main կայքէջից:

ՌԱՀՀԿ-ն ընդգրկվեց կրթական ծրագրում

Երեւանի՝ Եվրախորհրդի կողմից ֆինանսավորվող քաղաքագիտության դպրոցի հետ ՌԱՀՀԿ-ն ընդգրկվեց «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի մի ծրագրում, որի նպատակն է Հայաստանում, Ադրբեջանում եւ Վրաստանում պատրաստել քաղաքացիական կրթության դասատուների ինտենսիվ որակավորման նոր ծրագիր: →

← Փետրվարի 15-18-ը ՌԱՀՀԿ տնօրեն Ռիչարդ Կիրակոսյանը Թբիլիսիում մասնակցեց ծրագրային սեմինարին եւ ընտրվեց այդ ծրագրի հայաստանյան փորձագետ:

Konrad Adenauer Stiftung

ՌԱՀՀԿ-ում հանդիպեցին Թուրքիայի առաջատար հետազոտական կենտրոններից մեկի փորձագետները

Փետրվարի 10-ին ՌԱՀՀԿ անձնակազմը, պրակտիկա անցնող ուսանողները եւ կամավորները հանդիպում ունեցան Անկարայում գտնվող՝ Թուրքիայի տնտեսական քաղաքականության հետազոտությունների հիմնադրամի (TEPAV) մի խումբ փորձագետների հետ: Հանդիպման ընթացքում TEPAV-ի տնօրեն Գյուվեն Սաքը եւ TEPAV-ի անձնակազմից Էրոլ Թայմազը, Բուրջու Գյուլթեքին Փունսմանը եւ Մեզենեֆ Հաթամը ներկայացրին Հայաստան-Թուրքիա սահմանի տնտեսական զարգացման ծրագիրը, որը ներառում է նաեւ հայոց պատմական մայրաքաղաք Անիի վերանորոգումը:

Հանդիպման ժամանակ ՌԱՀՀԿ-ում պրակտիկա անցնող ուսանողներ Աստղիկ Աբրահամյանը, Կարինե Բաղդասարյանը, Սեւակ Հարությունյանը, Հեղինե Սիմոնյանը, Շուշանիկ Կարապետյանը, Մարիամ Պահլավունին, Լուսինե Վարդանյանը, ինչպեսեւ Կենտրոնի կամավորներից Աննա Կալենչյանը եւ Նինա Տանկուրյանը շարադրեցին հայ-թուրքական արձանագրությունների վերաբերյալ իրենց տեսակետները:

ՌԱՀՀԿ-ն անցկացրեց աշխատանքային սեմինար՝ նվիրված քաղաքական տեխնոլոգիաներին

Փետրվարի 12-ին ՌԱՀՀԿ անձնակազմի եւ պրակտիկա անցնող ուսանողների համար անցկացվեց աշխատանքային սեմինար՝ նվիրված Հայաստանում քաղաքական տեխնոլոգիաների օգտագործմանը: ՌԱՀՀԿ փորձագետ Արմինե Ղազարյանը, հանրության հետ կապերի մասնագետներ Լիլիթ Սարուխանյանը եւ Աշխեն Մուշեղյանը հանդես եկան ՀՀ-ում քաղաքական տեխնոլոգիաների վերաբերյալ իրենց նկատառումներով: Իր հերթին ՌԱՀՀԿ տնօրեն Ռիչարդ Կիրակոսյանը գնահատական տվեց Հայաստանում քաղաքական քարոզարշավների ժամանակ եւ գովազդներում կիրառվող պատկերների սխալ օգտագործմանը:

ՌԱՀՀԿ-ն անցկացրեց առանց հղումների քննարկում՝ նվիրված հայաստանյան զարգացումներին

Փետրվարի 26-ին ՌԱՀՀԿ տնօրենը Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական անձնակազմի եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ անցկացրեց առանց հղումների քննարկում՝ նվիրված Հայաստանում ներկայում ընթացող զարգացումներին: Ոչ պաշտոնական քննարկման մասնակիցների շարքում էին ՀՀ-ում Էստոնիայի դեսպան Թոմաս Լուկը, Վրաստանի դեսպան Գրեգորի Թաբատաձեն, Եվրախորհրդի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Սիլվիա Զեհեն, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի ներկայացուցչի տեղակալ Դրրք Բոբերգը, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Եգիպտոսի, Իտալիայի դեսպանությունների, ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի եւ Հայաստանում Եվրամիության խորհրդակցական խմբի ներկայացուցիչները:

© Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոն

ՌԱՀՀԿ-ն աջակցում է կրթությանը Հայաստանում

Կենտրոնի կողմից ՀՀ-ում կրթության զարգացմանն աջակցելու ցայտուն օրինակ էր փետրվարի 27-ին Ռիչարդ Կիրակոսյանի հանդիպումը Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում եւ նրա՝ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությանը նվիրված դասախոսությունը, որով տրվեց ավարտական կուրսի կիսամյակային առարկայի առաջին դասի մեկնարկը:

ՌԱՀՀԿ-ի առաջիկա հրատարակությունները

Հայացք Հայաստանի «տխրահռչակ հարուստների» ապրելակերպին

Իբրեւ աջակցություն ՀՀ-ում սոցիալ-տնտեսական անհավասարության խնդրի վերաբերյալ Համաշխարհային բանկի նոր վերլուծությանը՝ ՌԱՀՀԿ-ն պատրաստում է ունեցվածքի եւ եկամտի միջեւ հետզհետե մեծացող անջրպետին նվիրված նորարար մի վերլուծություն: Այն նաեւ կներառի Հայաստանի «տխրահռչակ հարուստների» ապրելակերպին նվիրված մի գլուխ, որը կուսումնասիրի օլիգարխիկ գործարարության ու ձեռներեցության բնույթը, ինչպեսեւ երկրի տնտեսական գործունեությանը «ապրանքային մենաշնորհների» եւ համապատասխան այլ մենաշնորհների հասցրած վնասները:

«Հայաստանյան քաղաքականության տարեգիրք. 2010»

Կենտրոնի անձնակազմը ներգրավված է նոր հետազոտությունների նախապատրաստական փուլում: Ընթացիկ տարվա ամփոփիչ գիրքը կրում է «Հայաստանյան քաղաքականության տարեգիրք. 2010» նախնական խորագիրը: Այն նմանապես կծառայի իբրեւ կարեւոր հիմնաղբյուր եւ ընթերցողների դատին կհանձնի ՀՀ քաղաքականության բոլոր դիտանկյուններն արծարծող հարուստ տեղեկանյութ եւ վերլուծություններ:

«Անվտանգության եւ ռազմական հետազոտություններ»

ՌԱՀՀԿ-ը պատրաստում է անվտանգության եւ ռազմական հետազոտությունների թեմայով զեկույցների՝ ուսումնասիրությունների ու հոդվածների նոր շարք՝ կիզակետում ունենալով Հայաստանի ազգային անվտանգության եւ ռազմական բարեփոխումների խնդրին վերաբերող կարեւոր հարցեր:

Զեկույցների այս ուրույն եւ գործընկերների կողմից վերանայված շարքը, որում կընդգրկվեն միջազգային եւ հայ փորձագետների վերլուծությունները, կիրատարակվի երեք լեզվով՝ հայերեն, անգլերեն եւ ռուսերեն: Այն հավակնում է բեմահարթակ դառնալ ինչպես տարածաշրջանային ու միջազգային անվտանգության հարցերին, ռազմական ստրատեգիային, ռազմարվեստին եւ ռազմագիտությանը, այնպես էլ ՀՀ ազգային անվտանգությանը եւ պաշտպանական քաղաքականությանը վերաբերող այլ նշանակալից թեմաների քննարկման համար:

ԶԼՄ-ների հետ հարաբերությունները

Ռիչարդ Կիրակոսյանը ներկայացրեց հայ-թուրքական դիվանագիտությանն առնչվող թարմ տեղեկություններ, ըստ որոնց՝ իրավիճակը լուրջ է

Փետրվարի 4-ին ՌԱՀՀԿ տնօրենը «Հայացք» ակումբում տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ քննադատաբար գնահատեց թուրքհայկական դիվանագիտության ներկա վիճակը: Կիրակոսյանի պնդմամբ՝ Թուրքիայի «քաղաքական կեցվածքի ու Հայաստանի վրա ճնշում գործադրելու փորձի» առումով հայ-թուրքական դիվանագիտության իրավիճակը լուրջ է: (Ամբողջական տեքստի համար կարող եք այցելել ՌԱՀՀԿ-ի՝ www.acnis.am կայքէջ):

TODAY'S ZAMAN

Փետրվարի 6-ին Ռիչարդ Կիրակոսյանը հարցազրույց տվեց թուրքական «Զաման» օրաթերթի թղթակից Սերվեթ Յանաթմային՝ կարծիք հայտնելով, որ ՀՀ սահմանադրական դատարանի վերջերս ընդունած վճռի հանդեպ Թուրքիայի անհանգստությունն ու անվստահությունը կարող է բումերանգի ազդեցություն ունենալ: «Եթե ՀՀ ՍԴ որոշման պատճառով Անկարայի եւ Երեւանի միջեւ հարաբերությունների վերականգմանն ուղղված ջանքերն անհաջողության մատնվեն, ապա Թուրքիան է, որ կկորցնի իր հանդեպ վստահությունը»,- «Զամանին» ասել է նա:

Մամուլի ասուլիս՝ նվիրված ՌԱՀՀԿ-ի նոր Տարեգրքի լույսընծայմանը

Փետրվարի 24-ին «Դե ֆակտո» ակումբում տեղի ունեցած մամուլի ասուլիսի գլխավոր առիթը «ՌԱՀՀԿ-ն՝ 15 տարեկան. նոր գաղափարների ուժը» վերտառությամբ Կենտրոնի նոր Տարեգիրքն էր: Լրագրողների հետ հանդիպմանը ՌԱՀՀԿ տնօրեն Ռիչարդ Կիրակոսյանը, ավագ փորձագետ Մանվել Սարգսյանը եւ փորձագետ Արմինե Ղազարյանը համառոտակի ներկայացրին ժողովածուի բովանդակությունը՝ նշելով, որ նրա առաքելությունը հանրային իրազեկման բարձրացման եւ Հայաստանի առջեւ ծառացած ռազմավարական մարտահրավերների շուրջ համազգային բանավեճի ընդլայնումն ու խորացումն է:

Հավելյալ տեղեկություն մեր մասին

Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնը 1994թ. հիմնադրել է ՀՀ առաջին արտգործնախարար Ռաֆֆի Կ. Հովհաննիսյանը՝ արժանանալով հայաստանյան եւ Սփյուռքի աջակիցների լայն շրջանակների զորակցությանը: Հետեւելով համաշխարհային զարգացումներին, գիտելիքների հիմքեր խարսխելով, հանրության հետ երկխոսություն ծավալելով՝ Կենտրոնը հետխորհրդային տիրույթում հանդես է գալիս որպես երկրաքաղաքական ստեղծագործական մտածողություն ձեւավորող եւ միջազգային միջավայրի համապարփակ ընկալմանը նպաստող ուժ: Վերջին շրջանում Կենտրոնն առաջնահերթ տեղ է հատկացնում տարածաշրջանային անվտանգության ու համագործակցության, քաղաքացիական կրթության, պետության եւ ազգի համար վճռորոշ՝ ներքին ու արտաքին քաղաքականությունների կիրառական հետազոտությանը:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել ՌԱՀՀԿ՝ Երեւան, Երզնկյան 75, հեռախոս՝ (37410) 528-780 կամ 274-818, հեռապատճեն՝ (37410) 52-48-46, էլ. փոստ՝ root@acnis.am եւ info@acnis.am, կայքէջ՝ www.acnis.am:

© Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոն
Խմբագիր՝ Ռիչարդ Կիրակոսյան
Ձեւավորումը՝ Աշոտ Թուրազյանի